ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած, գործունակ (բացառությամբ անգործունակ ճանաչված անձի կողմից սույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դեպքի), օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ Հայաստանի Հանրապետությունում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ իրավունք ունի դիմելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, եթե՝

1) օրենքով սահմանված կարգով վերջին երեք տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.

2) կարող է բացատրվել հայերեն լեզվով և

3) ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող այն անձը՝

1) որը մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին երկու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ և այդ երկու տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական հիմքերի առկայությամբ բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի զավակ կամ ծնող.

2) որի ծնողները (կամ նրանցից մեկը) նախկինում ունեցել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, և որը օրենքով սահմանված կարգով վերջին մեկ տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում.

3) ***(կետն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-319-Ն)***

4) որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից.

5) որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ:

Առանց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող ազգությամբ հայ անձը կամ անգործունակ անձը, որի խնամակալը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

Առանց սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով, ինչպես նաև երկրորդ մասով սահմանված պահանջների պահպանման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է շնորհվել Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած, ինչպես նաև տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի բնագավառներում նշանակալի ավանդ ունեցող անձանց: Տնտեսության, գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սպորտի բնագավառներում նշանակալի ավանդի նկարագրությունը և գնահատման չափանիշները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

~~Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն հայցող անձը քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ, իսկ անգործունակ ճանաչված անձի դեպքում՝ խնամակալի միջոցով, պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին:~~

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու գործերն ընդունվում և դրանց ընթացք է տրվում քաղաքացիության գործերի կառավարման էլեկտրոնային տեղեկատվական համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանում են քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է, կամ առկա է հիմնավոր կասկած, որ կարող է վնասել պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանը և բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին և բարի համբավին: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը տալիս է հետևյալ երդումը. «Ես՝ (անուն-ազգանուն), դառնալով Հայաստանի Հանրապետության քաղաքացի, երդվում եմ հավատարիմ լինել Հայաստանի Հանրապետությանը, պահպանել Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները, պաշտպանել Հայաստանի Հանրապետության անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Պարտավորվում եմ հարգել Հայաստանի Հանրապետության պետական լեզուն, ազգային մշակույթը և սովորույթները:»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձը ստորագրում է երդման տեքստը: Երդման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում ներկայանում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ: Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք երդման արարողությանը մասնակցելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր ստանալու համար ներկայանում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին:

~~Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձին տրվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:~~

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձին Համակարգի միջոցով ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը:

(13-րդ հոդվածը խմբ. 26.02.07 ՀՕ-75-Ն, փոփ., լրաց. 08.12.11 ՀՕ-319-Ն, փոփ. 19.06.13 ՀՕ-74-Ն, լրաց. 07.05.15 ՀՕ-33-Ն, խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն, լրաց. 31.05.19 ՀՕ-44-Ն, փոփ., լրաց. 08.12.21 ՀՕ-393-Ն, խմբ., լրաց. 07.07.22 ՀՕ-284-Ն, 25.10.23 ՀՕ-334-Ն)

(07.07.22 ՀՕ-284-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 23. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության դադարեցումը

(վերնագիրը խմբ. 08.12.11 ՀՕ-319-Ն)

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու դեպքում.

2) կեղծ կամ սխալ փաստաթղթերի կամ կեղծ տվյալների հիման վրա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում, եթե անձի կողմից կեղծ կամ սխալ փաստաթղթեր կամ կեղծ տվյալներ ներկայացնելը հիմնավորվել է օրենքով սահմանված կարգով, և արարքը կատարելու պահից չի անցել ~~5~~ **10** տարի.

3) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով նախատեսված հիմքերով:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու հիմքերն ի հայտ գալու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը հարուցում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու գործընթաց, որի մասին անձը ծանուցվում է օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կազմում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու եզրակացություն և ներկայացնում Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով՝ այն սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով քննարկելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին եզրակացություն ներկայացնելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը սույն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով անձի քաղաքացիությունը դադարեցնելու մասին առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը, որը, սույն օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն, լուծում է անձի քաղաքացիությունը դադարեցնելու հարցը:

Սույն հոդվածի 1-ին մասի երկրորդ կետով նախատեսված դեպքերում անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը չի կարող դադարեցվել, եթե քաղաքացիության դադարեցման արդյունքում վերջինս կդառնա քաղաքացիություն չունեցող անձ:

Քաղաքացիության դադարեցման գործերն ընդունվում և վարույթներն իրականացվում են Համակարգի միջոցով:

(23-րդ հոդվածը խմբ. 08.12.11 ՀՕ-319-Ն, 07.05.15 ՀՕ-33-Ն, փոփ., լրաց. 08.12.21 ՀՕ-393-Ն)

Հոդված 24. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելը

1. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխելու քաղաքացիությունը՝ դուրս գալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից և ձեռք բերելու այլ պետության քաղաքացիություն կամ դուրս գալու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, եթե ունի այլ պետության քաղաքացիություն: 18 տարին չլրացած քաղաքացին իրավունք ունի փոխելու Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը՝ ծնողների կամ նրանցից մեկի քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում՝ սույն օրենքի 17-րդ հոդվածով սահմանված հիմքերով և կարգով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու մասին քաղաքացու դիմումը մերժվում է, եթե՝

1) նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում.

2) նրա նկատմամբ կա դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ.

3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից նրա դուրս գալը հակասում է Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության շահերին.

4) նա ունի պետության հանդեպ չկատարված հարկային կամ հանրային իրավական դրամական պարտավորություններ.

5) նա ունի «Պաշտպանության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքներով նախատեսված պարտավորություններ, մասնավորապես՝

ա. տվյալ տարվա ընթացքում լրանում է արական սեռի քաղաքացու 16 տարին, և վերջինս պետք է կատարի զինվորական հաշվառման կանգնելու իր պարտականությունը,

բ. ունենալով զինվորական հաշվառում՝ չի զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության կամ չի հաշվառվել զինված ուժերի պահեստազորում,

գ. հաշվառված է զինված ուժերի պահեստազորում, սակայն ունի օրենքով սահմանված բժշկական փորձաքննություն (վերափորձաքննություն) անցնելու պարտականություն,

դ. քաղաքացիության դադարեցման մասին դիմումի քննարկման ժամանակահատվածում ընդգրկված է կազմակերպվող վարժական հավաքներին կամ զինվորական վարժանքներին,

ե. դիմումի քննարկման ժամանակահատվածում հայտարարվել կամ գործում է ռազմական դրության իրավական ռեժիմ:

3. Այլ պետության քաղաքացիություն չունենալու դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցվում է օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված՝ տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին գրավոր հավաստման (տեղեկանքի) հիման վրա**, որը քաղաքացին ներկայացնում է Համակարգի միջոցով**: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար դիմելիս սույն մասով նախատեսված՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված գրավոր հավաստումը (տեղեկանքը) ներկայացնելու անհնարինության դեպքում քաղաքացին այն կարող է ներկայացնել ~~դիմելու օրվանից սկսած~~ **Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումն անձամբ ներկայացնելու օրվանից սկսած**՝ եռամսյա ժամկետում: Սույն մասով սահմանված՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված գրավոր հավաստումը (տեղեկանքը) եռամսյա ժամկետում չներկայացվելու դեպքում դիմումն ընդունած մարմինը քաղաքացու դիմումը մերժում է: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու դիմումը մերժելուց հետո քաղաքացին մեկ տարվա ընթացքում

կարող է կրկին դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված գրավոր հավաստումը (տեղեկանքը) ներկայացնելու դեպքում:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով պահանջվող տեղեկությունների իսկության և հավաստիության համար պատասխանատվություն է կրում փաստաթուղթը ներկայացնող անձը: Այն դեպքում, երբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելուց հետո՝ ~~հինգ~~ **տասը** տարվա ընթացքում, պարզվի, որ անձը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, և առկա են սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված՝ քաղաքացիությունից դուրս գալու մասին դիմումը մերժելու հիմքեր, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը նախաձեռնում է անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու գործընթաց, որի մասին անձը ծանուցվում է օրենքով սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը կազմում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին եզրակացություն և ներկայացնում Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով՝ այն սույն օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով քննարկելու և Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին եզրակացություն ներկայացնելու համար: Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը սույն օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգով անձի քաղաքացիությունը դադարեցնելու մասին հրամանագիրն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը՝ սույն օրենքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն անձի քաղաքացիության վերաբերյալ հարցը լուծելու համար:

(24-րդ հոդվածը խմբ. 08.12.11 ՀՕ-319-Ն, լրաց. 07.05.15 ՀՕ-33-Ն, խմբ. 08.12.21 ՀՕ-393-Ն, լրաց. 11.12.23 ՀՕ-408-Ն)

Հոդված 27. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման կարգը

(վերնագիրը խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն)

1. ~~Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումն անձը ներկայացնում է անձամբ, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Հայաստանի~~

~~Հանրապետությունում գտնվելու դեպքում դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ: Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ ներկայացված դիմումները Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով ուղարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին:~~

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն հայցող անձը, իսկ անգործունակ ճանաչված անձի դեպքում՝ խնամակալը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու մասին դիմումը ներկայացնում է անձամբ: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումը Հայաստանի Հանրապետության քաղաքացին, իսկ 18 տարին չլրացած քաղաքացու դեպքում՝ ծնողը, ներկայացնում է անձամբ: Հայաստանի Հանրապետությունում գտնվելու դեպքում սույն մասով սահմանված դիմումները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին, իսկ օտարերկրյա պետությունում գտնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

1.1. Նախքան սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումի ներկայացումը քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու նպատակով անձը Համակարգի միջոցով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մարմիններին ներկայացնում է էլեկտրոնային հայտ, որից հետո Համակարգի միջոցով հերթագրվում է դիմումն անձամբ ներկայացնելու նպատակով, եթե հիշյալ մարմինների կողմից կատարված նախնական ուսումնասիրությամբ հաստատվել է, որ ներկայացված փաստաթղթերն ու տեղեկություններն ամբողջական են և համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Փաստաթղթերն ու տեղեկություններն ամբողջական չլինելու կամ օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում անձը Համակարգի միջոցով ծանուցվում է դրանք ներկայացնելու և հայտը համալրելու անհրաժեշտության մասին:

1.2. Էլեկտրոնային հայտը ներկայացնելիս անձը սույն օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված կառավարության որոշմամբ սահմանված կարգով հնարավորություն է ստանում Համակարգի միջոցով վճարելու քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու համար օրենքով սահմանված պետական տուրքը:

1.3. Սույն հոդվածի 1.1-ին մասով նախատեսված էլեկտրոնային հայտ ներկայացվելու դեպքում, իսկ հետագայում նաև դիմումի քննարկման ընթացքում՝ Համակարգի միջոցով հարցումներ են ուղարկվում քաղաքացիություն ստանալու և դադարեցնելու գործընթացում ներգրավված պետական մարմիններին, այդ թվում ինքնաշխատ եղանակով՝ նաև պետական մարմինների տիրապետման ներքո գտնվող էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր՝ քաղաքացիություն շնորհելու կամ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ՝ սույն օրենքի 13-րդ հոդվածի 7-րդ մասով կամ 24-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները պարզելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումների կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կազմած դրական եզրակացություններն առաջարկությամբ ուղարկվում են Հայաստանի Հանրապետության Նախագահին՝ կցելով Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կազմած բացասական եզրակացությունները, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում անձի քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ եզրակացություններն ուղարկվում են Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողով:

4. Սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կազմած եզրակացություններն ստանալուց հետո Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովը դրանք քննարկում է հանձնաժողովի ղեկավարի կողմից հրավիրվող նիստերում: Քննարկման արդյունքով կազմվում են ամփոփ եզրակացություններ և ուղարկվում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում համապատասխան եզրակացություններն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացնում է քաղաքացիության վերաբերյալ դիմում ներկայացրած անձին քաղաքացիություն շնորհելու կամ դադարեցնելու կամ քաղաքացիության շնորհումը կամ դադարեցումը մերժելու մասին առաջարկություն՝ կցելով

Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը և Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովից ստացված ամփոփ եզրակացությունները:

6. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում անձին քաղաքացիություն շնորհելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահին առաջարկություն ներկայացնում է Հայաստանի Հանրապետության վարչապետը՝ առանց սույն հոդվածի 1-5-րդ մասերի պահանջների պահպանման: Սույն մասով նախատեսված դեպքերում Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից Հայաստանի Հանրապետության Նախագահին ներկայացվող առաջարկությանը կցվում են անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու վերաբերյալ համաձայնությունը, Հայաստանի Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի նախագիծը և ազգային անվտանգության բնագավառում լիազորված պետական մարմնի եզրակացությունը, որն ստանում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմը՝ Ազգային անվտանգության ծառայություն հարցում կատարելու միջոցով:

7. Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծմանն ուղղված Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերն ընդունվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 139-րդ հոդվածով սահմանված կարգով:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար սույն օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ օտարերկրյա պետության իրավասու մարմնի տված՝ տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելու իրավական հնարավորության մասին գրավոր հավաստում (տեղեկանք) ներկայացվելու դեպքում անձի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ է մտնում նրա կողմից օտարերկրյա պետության քաղաքացիություն ստանալու ապացույցը (օտարերկրյա պետության անձնագիր կամ օրենքով սահմանված կարգով վավերացված՝ տվյալ պետության քաղաքացիություն ձեռք բերելը հավաստող փաստաթուղթ) լիազոր մարմին ներկայացվելու պահից:

8.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցրած անձը պարտավոր է օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել Հայաստանի Հանրապետությունում իր բնակությունն օրինականացնելու համար կամ դուրս գալ Հայաստանի Հանրապետության տարածքից:

9. Քաղաքացիության հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(27-րդ հոդվածը խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն, 08.12.21 ՀՕ-393-Ն, փոփ., լրաց. 07.07.22 ՀՕ-284-Ն, լրաց. 11.12.23 ՀՕ-408-Ն)

Հոդված 27 1 Քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման գործերի կասեցումը

1 Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումի քննարկումը 60 օրով կարող է կասեցնել, եթե՝

1) առկա են առերևույթ կեղծ կամ անվավեր կամ սխալ կազմված փաստաթղթեր կամ տվյալներ, որոնց իսկությունը պետք է հավաստվի Հայաստանի Հանրապետության կամ օտարերկրյա պետության իրավասու մարմիններ կամ այլ կազմակերպություններ հարցումներ կատարելու միջոցով

2) դիմումի քննարկման ընթացքում փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, սխալներ կամ գործի քննության համար էական նշանակություն ունեցող այնպիսի հանգամանքներ, որոնց արդյունքում անհնարին է տվյալ դիմումի քննարկումը առանց լրացուցիչ կամ նոր փաստաթղթեր պահանջելու կամ ներկայացված փաստաթղթերում անհրաժեշտ ուղղում կատարելու

3) «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ դեպքերում:

2 Կասեցման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը ընդունում է պատճառաբանված որոշում, որը Համակարգի միջոցով եռօրյա ժամկետում ուղարկվում է քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու նպատակով դիմած անձին:

3 Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումի քննարկումը վերսկսվում է կասեցման հիմքերը վերանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

4. Եթե սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված դեպքերում դիմումի քննարկման կասեցման հիմքերը չեն վերացել մինչև սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ կասեցման առավելագույն ժամկետի լրանալը, ապա՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումի քննարկման վարույթը վերսկսվում է և լիազոր մարմինը գործի ընթացքը շարունակում է առկա փաստական հանգամանքների հիման վրա՝ կիրառելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 10-րդ հոդվածը

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումի քննարկման վարույթը կարճվում է:

5. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումի քննարկման վարույթը վերսկսվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

6 Քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու նպատակով դիմած անձը Համակարգի միջոցով ծանուցվում է իր դիմումի քննարկման կասեցման, վերսկսելու կամ վարույթը կարճելու մասին:

Հոդված 28. Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորությունները քաղաքացիության վերաբերյալ հարցերի լուծման ոլորտում

(վերնագիրը խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն)

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սահմանում է՝

1) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձանց համար Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և հայոց լեզվի իմացության ստուգման կարգը.

~~2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու, քննարկելու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը.~~

2) Քաղաքացիության գործերի կառավարման Համակարգի նկարագիրը և աշխատակարգը, հասանելիություն ունեցող մարմինները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիությունը դադարեցնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, դրանք ներկայացնելու, քննարկելու, այդ թվում՝ Համակարգի միջոցով էլեկտրոնային հայտ ներկայացնելու, դիմումն անձամբ ներկայացնելու համար հերթագրվելու, իրավասու մարմիններ (այդ թվում՝ ինքնաշխատ եղանակով պետական մարմինների տիրապետման ներքո գտնվող էլեկտրոնային տեղեկատվական համակարգեր) հարցումներ կատարելու, համապատասխան տեղեկություններ և եզրակացություններ, Համակարգի միջոցով ծանուցումներ ստանալու կարգը և ժամկետները, ինչպես նաև ազգությամբ հայ լինելը հաստատող մկրտության մասին փաստաթուղթ տրամադրող եկեղեցական կառույցների ցանկը #

3) անձի քաղաքացիության վերաբերյալ տեղեկություն ստանալու կարգը.

4) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձի երդման արարողակարգը:

(28-րդ հոդվածը խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն, 08.12.21 ՀՕ-393-Ն)

Հոդված 29. Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հարցերով դիմումների, միջնորդությունների ներկայացման և դրանց քննարկման կարգը

Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները, միջնորդությունները և համաձայնությունները ներկայացվում են գրավոր: Սույն օրենքի 11-րդ, 12.1-ին, 16-րդ, 17-րդ, 18-րդ հոդվածներով պահանջվող համաձայնություններն անձամբ ներկայացնելու անհնարինության դեպքում դրանց վրա անձանց ստորագրության իսկությունը վավերացվում է օրենքով սահմանված կարգով:

~~Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու մասին դիմումները քննարկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին մուտքագրվելու օրվանից սկսած՝ իննսուն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ դիմումները, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում անձի քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ գործերը քննարկվում են վեցամսյա ժամկետում: Դիմումը մերժելու կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված~~

~~հիմքերն ի հայտ գալու պարագայում անձի քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում կրկին կարելի է դիմել դիմումը մերժելու կամ քաղաքացիությունը դադարեցնելու օրվանից մեկ տարի հետո՝ սույն օրենքով սահմանված կարգով:~~

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու մասին սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը քննարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին մուտքագրվելու օրվանից սկսած՝ իննսուն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ սույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դիմումը, ինչպես նաև սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում անձի քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ գործերը քննարկվում են վեցամսյա ժամկետում: Ներկայացված դիմումը մուտքագրվում և դրան ընթացք է տրվում, եթե կից փաստաթղթերն ամբողջական են և համապատասխանում են օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Փաստաթղթերի ամբողջականությունն ապահովված չլինելու դեպքում դիմումատուին տեղում՝ բանավոր, ինչպես նաև Համակարգի միջոցով պարզաբանվում է 15 աշխատանքային օրվա ընթացքում փաստաթղթերը համալրելու մասին: Նշված ժամկետում փաստաթղթերը չհամալրելու դեպքում դիմումին ընթացք չի տրվում, որի մասին դիմումատուն ավտոմատ կերպով ծանուցվում է Համակարգի միջոցով: Այս դեպքում դիմումատուն սույն օրենքի 27-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգով կարող է կրկին էլեկտրոնային հայտ ներկայացնել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ դադարեցնելու համար:

Սույն օրենքի 27-րդ հոդվածի 1.1-ին մասով նախատեսված էլեկտրոնային հայտերը սույն օրենքի իմաստով չեն հանդիսանում քաղաքացիություն ստանալու կամ քաղաքացիություն դադարեցնելու մասին դիմումներ:

Դիմումը մերժելու կամ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու պարագայում անձի քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում կրկին կարելի է դիմել դիմումը մերժելու կամ քաղաքացիությունը դադարեցնելու օրվանից մեկ տարի հետո՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումների, միջնորդությունների, դրանց քննարկման ընթացքի, անձի քաղաքացիության վերաբերյալ տվյալները ֆիզիկական անձանց, կազմակերպություններին, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև օտարերկրյա պետություններին կարող են փոխանցվել կամ տրամադրվել միայն դիմումատուի կամ Հայաստանի Հանրապետության

քաղաքացիություն ձեռք բերած անձի համաձայնությամբ կամ օրենքով կամ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերում:

Սույն հոդվածի երրորդ մասով նախատեսված համաձայնությունը ներկայացնելու պարտավորությունը կրում է տվյալներ ստանալու նպատակով հարցմամբ դիմողը:

(29-րդ հոդվածը փոփ., լրաց. 19.06.13 ՀՕ-74-Ն, խմբ. 06.12.17 ՀՕ-251-Ն, 08.12.21 ՀՕ-393-Ն, փոփ. 07.07.22 ՀՕ-284-Ն)

Հոդված 31 Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումների քննարկման գործերով արխիվացումը

1 Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումների քննարկման գործերն արխիվացվում են էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմին ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու մասին դիմումներով կազմված գործերը պահպանվում են թղթային եղանակով՝ մինչև դրանց հետագա թվայնացումը: Թվայնացումից հետո թղթային եղանակով պահպանվող գործերը սահմանված կարգով ոչնչացվում են: